

47). 3. АВАЛОВЪ. Присоединение Грузии къ Россіи, Спб., 1901, VIII+305 стр. 8°, ц. 1 руб. 50 коп. (2. Ավալով—Վրաստանի միացումը Ռուսաստանին, Պետերբուրգ, 1901 թ.):

Վրաստանի միացումը Ռուսաստանին, որի հարիւրամեակը տօնուէց անցեալ սեպտեմբերի ամսի վերջերում, ունի շատ հարուստ ու մեծ գրականութիւն։ Այդ պատմութիւնը գրել են թէ՛ ռուսները և թէ՛ վրացիները. այդ պատմութիւնը ռուսմասօրեկու համար կան պաշտօնական բազմաթիւ տեղեկութիւններ, որոնք հրատարակուած են։ Զանց անելով անթիւ մանր մունր գրուածքները, կօմպիլիացիները, որոնք լոյս տեսան թէ՛ հարիւրամեակի ընթացքում և թէ՛ մանաւանդ ներկայ յօբեկանական տարում, մենք այստեղ կը յիշատակենք միայն Դուբրովինի աշխատութիւնները, որոնք մինչև այժմ էլ ամենամանրաման աղբիւրներն են Վրաստանի միացման պատմութեան համար, ինչպէս նաև Պօտտօի յայտնի «Кавказская Война» աշխատութիւնը, որ թէև մասնաւոր նպատակ ունի, լոկ պատերազմական գործողութիւններն է նկարագրում, բայց շօշափում է և շատ քաղաքական հարցեր, որոնք առաջ բերին այդ պատերազմները։

Բայց այդքան առատ ու հարուստ գրականութիւնը մի շատ աչքի ընկնող պակասութիւն ունէր։ Նա տալիս էր միայն փաստերի դասաւորութիւն, պաշտօնական բնաւորութիւն էր կրում, բացատրում էր պատմական եղելութիւնը միանգամից ընդունուած տեսակէտից։ Կարգալով բազմաթիւ նոր հրատարակութիւնները, դուք տեսնում էիք նրանց մէջ միայն նոյն մեթոքերի, նոյն հայեացքների կրկնութիւններ։ Թէ՛ ռուս և թէ՛ վրացի հեղինակները չէին մտնում առամական իրողութիւնների խորքը, չէին վերլուծում նրանց քննադատօրէն։ Ընդհակառակն, ռուսները, կարծես խնայելով վրացիների ինքնասիրութիւնը, ներկայացնում էին անցեալ դարերի Վրաստանը փարզագոյն բարեբախտութեան մէջ, այնպէս որ այդ թագաւորութեան յանկարծակի վերջնալը մի առեղծուած էր մնում, հանելուկի պէս մի բան։ Վրացի գրողները աւելի հեռուն էին գնում. ապացոյցների կարօտ չէ, որ վրաց պատմագրութիւնը այնպիսի սաստիկ չօվինիզմով է տոգորուած, որ այժմ էլ նա շարունակ պարագում է պատմական փաստերը աղճատելով, վայրի վերոյ լուսաբանելով։ Նա աշխատում է տալ Վրաստանին այնպիսի քաղաքական և կուլտուրական դիրք, որ երբէք նա չէ ունեցել, աշխատում է ամեն կողմով բարեկարգ և բարգաւաճ մի երկիր

հրատարակել վրաց թագաւորութիւնը: Այդպիսի հայրենասիրական պատմագրութեան մի նմուշ է ներկայացնում վրացի պրօֆէսոր Խախանով:

Ահա ի նկատի ունենալով այդ գրութիւնը, մի առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում պ. Աւարովի այս աշխատութիւնը: Նա կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ: Նա առաջինն է վրացի գրողների մէջ, որ նայում է անցեալին քննադատաբար, որ չէ ծածկում իրողութիւնները և լուսաբանում է նրանց մի լուրջ ու անկողմնակալ հետազոտողի տեսակետից:

Հեղինակը նկարագրում է թէ ինչ հին, փտած պետական կազմակերպութիւն ունէր Վրաստանը, թէ որքան անհեռատես, միակողմանի քաղաքագէտներ էին նրա կառավարիչները, թէ ինչ ահագին նշանակութիւն ունէին Թիւրքիան և Պարսկաստանը վրաց թագաւորութեան ճակատագրի տեսակետից: Գալով միացման ժամանակներին, նա մի շարք լաւ ազայցուցուած տիտուլիւններ է անում, յայտնում է մի շարք ճշմարտութիւններ, որոնք բղիթում են եղելութիւններից, բայց մինչև այժմ չէին լուսաբանուած, ձեռնարկուած: Ռուսաստանը Վրաստանում չունէր տնտեսական շահեր, քաղաքական շահերն էլ, օրինակ՝ ռուսական սահմանների «կանոնաւորումը», գոյութիւն չունէին: Վրացիները, երկար ժամանակ յարաբերութիւններ ունենալով Ռուսաստանի հետ, չը կարողացան լաւ ճանաչել, ուսումնասիրել նրա պետական կազմակերպութիւնը, նրա վարչական աւանդութիւնները: Նրանք առաջարկում էին ընդունել ռուսաց հպատակութիւն, բայց յայտնի պայմաններով, արտօնութիւններ ստանալու պայմաններով: Մինչդեռ Ռուսաստանը չէր կարող արտօնութիւններ տալ, չէր կարող, որովհետև մի ուժեղ, միացած կայսրութիւն միմիայն անպայման հպատակութիւն, անպայման միացում կարող էր ընդունել:

Չէ կարելի, ի հարկէ, ընդունել թէ պ. Չ. Աւարով ասել է այդ առարկայի մասին այն ամենը, ինչ պէտք է ասել: Վրաստանի միացումը, անշուշտ, ուրիշ բազմակողմանի ուսումնասիրութիւնների է կարօտ: Բայց այս գիրքը, որ գրուած է կենդանի, աշխոյժ ոճով, իբրև առաջին փորձ քննական պատմութեան, մի շատ նշանաւոր երեւոյթ է: Նա ցոյց է տալիս որ վրացիների մէջ էլ զարթնում է քննադատական ոգին: Քննել իրողութիւնները, դուրս բերել ճշմարտութիւնները, որքան էլ նրանք դառն ու մոռյալ լինեն, դա նշանակում է ինքնաճանաչութեան, ճշմարիտ, անկեղծ հայրենասիրութեան նշաններ ցոյց

տալ: Եւ մնում է ցանկալ որ պ. Աւայովի այս գեղեցիկ գործը օրինակ հանդիսանայ շատ շատերի համար:

Լ.

48) Բժ. Ա. Բուզուղեան.—1. «Կարիք եւ Բարեգործութիւն», 2. «Մանկավարժական համառօտ գրոյցներ», 3. «Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն», 4. «Մարմնամարզութիւն», տպագրուած 1901 թուին:

Դժուար կը լինէր մի առ մի մանրամասն քննել յարգելի բժշկի այս չորս նորագոյն աշխատութիւնները: Ընթերցողը վերնագրերից արդէն նկատում է որ շատ բաղմակողմանի խնդիրներ է չօջափում հեղինակը իր աշխատութիւնների մէջ, որոնց թիւը այսօր հասել է 17-ի:

Բժկ. Բուզուղեանի գրելու եղանակի հետ մենք արդէն ծանօթացրել ենք «Մուրճի» ընթերցողներին: Նրա հեղինակութիւնները կարելի է իսկապէս երկուսի բաժանել.— սոսկ ժողովրդական ձեռնարկներ և փիլիսոփայական հայեացքներ որոշ հարցերի վրայ:

Վերև յիշած գրքոյկների մէջ առաջին տեսակին կարելի է վերաբերել նրա «Մարմնամարզութիւնը», որ իր նկարներով դիւրամարս է դառնում և գործնական նշանակութիւն ստանում:

Մի ակնարկ գլեյով երեխաների կանոնաւոր կրթութեան ու դաստիարակութեան խնդրի վրայ, յոյց տալով ընտանիքին կրթութեան ահագին նշանակութիւնը, նա կանգ է առնում ֆիզիկական մարզութիւնների և բարոյական ու մտաւոր կրթութեան վրայ: Գրքի վերջում հեղինակը (պէտք է ասած համառօտօրէն) խօսում է մարմնական մարզութիւնների մի քանի ձևերի մասին:

Յայտնի է որ նորագոյն մանկական-առողջապահական գիտութիւնը աւելի պահանջում է ազատ, բայցօթեայ խաղեր— վազ, թռիչք և գիմնարական մարզութիւններ (Շվեդական մարզութիւններ), ինչպէս և ասում է պ. հեղինակը:

Սակայն իսկական մարմնամարզութիւնը (սենեակի մէջ, թէ դուրսը) թէ առանց գործիքների և թէ գործիքների միջոցով (օր. գնդակի, լեփուկի, ձողերի, պարանների, բեախնէ լարերի գիրերի միջոցով) նոյնպէս շատ օգտաւէտ են և գործածելի են ձմեռը սկսեալու:

Հոկտեմբեր, 1901.